**Արձանագրություն N 2**

***2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (հակաուռուցքային) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/26» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան «19» «Ապրիլի» 2023թ.
ժամը 15:00

Բացման նիստին մասնակցել են՝

Հանձնաժողովի նախագահ Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Հ. Խուրշուդյան)***

Ընդունել ի գիտություն, որ 03.04.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի ապրիլի 17-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի ապրիլի 18-ին ժամը 14:00-ին: 2023 թվականի ապրիլի 19-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | mercado@netsys.am | 00471216 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Հ. Խուրշուդյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Հ. Խուրշուդյան)***

Մանսակցի կողմից առաջարկված բոլոր չափաբաժինների մասով՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ, ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գինը, ուստի բոլոր չափաբաժինների համար «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ մասի:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***4. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին***

---

***(Հ. Խուրշուդյան)***

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները (կցվում է) գերազանցում են գնման ընթացակարգի գնման գինը, ուստի ենթակա են մերժման և համաձայն ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա: Իսկ գնման ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների համար ոչ մի գնային առաջարկ չի ներկայացվել, ուստի վերջիններիս մասով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա ևս հայտարարել չկայացած: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/26» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 21.04.2023թ-ից մինչև 30.04.2023թ.-ը ներառյալ ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------ Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ------------------ Մ. Հարությունյան

------------------ Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ------------------ Հ. Սարգսյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք օնկո դեղերի վերաբերյալ 18.04.2023թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| NN | Դեղի անվանումը | CPV կոդեր | Քանակ | Նախահաշվային | | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Դակտինոմիցին 0.5մգ | 33651228/501 | 80 | 19,200.00 | 1,536,000.00 | 8,000,000.00 | 1,600,000.00 | 9,600,000.00 | 100,000.00 | 120,000.00 |
| 2 | Դաունոռուբիցին 20մգ | 33651229/504 | 250 | 6,984.00 | 1,746,000.00 | 5,000,000.00 | 1,000,000.00 | 6,000,000.00 | 20,000.00 | 24,000.00 |
| 3 | Դոքսոռուբիցին | 33651230/501 | 1,100 | 6,583.75 | 7,242,125.00 | 8,250,000.00 | 1,650,000.00 | 9,900,000.00 | 7,500.00 | 9,000.00 |
| 4 | Մետոտրեքսատ 50մգ | 33651224/501 | 435 | 3,900.00 | 1,696,500.00 | 2,175,000.00 | 435,000.00 | 2,610,000.00 | 5,000.00 | 6,000.00 |
| 5 | Վինբլաստին 5մգ | 33651236/504 | 50 | 54,000.00 | 2,700,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 6 | Բլեոմիցին 15մգ | 33651226/502 | 40 | 12,600.00 | 504,000.00 | 600,000.00 | 120,000.00 | 720,000.00 | 15,000.00 | 18,000.00 |
| 7 | Իդառուբիցին 5մգ | 33651315/504 | 30 | 70,000.00 | 2,100,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |